ԿՈՉ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՅՕԲԵԼԵԱՆԸ 1882–1912

Անցեալ 1912 թուին լրացաւ մեր շնորհալի բանաստեղծ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆի գրական գործունէութեան երեսնամեակը։ Այդ երկարամեայ գրական գործունէութեան ընթացքում Յ. Յովհաննիսեանի տուած բանաստեղծական երկերը հայ գրականութեան ամենագեղեցիկ էջերից մէկն են եղել։ Յ. Յովհաննիսեանի աչքի ընկնող բանաստեղծական տաղանդը և երկարամեայ գրական – ուսուցչական գործունէութիւնը, որ վաղուց ի վեր շահել են հայ հասարակութեան լայն խաւերի յարգանքն ու համակրանքը, ցանկութիւն յառաջ բերին պատշաճաւոր կերպով տօնելու նրա երեսնամեայ գրական գործունէութեան յօբելեանը։

Բանաստեղծ և ուսուցիչ Յ. Յովհաննիսեանի յօբելեանը տօնելը նախաձեռնել էր Էջմիածնի Գէորգեան Ճեմարանի ուսուցչական խումբը, որի կազմին էր պատկանում նա երկար տարիներ, սակայն մի շարք անակնկալ հանգամանքներ խոչընդոտ հանդիսացան նախաձեռնողների գովելի ցանկութեան իրագործման։ Այժմ, երբ Յ. Յովհաննիսեանը պաշտօնով Բաքու է տեղափոխուել, նրա յօբելենական հանդիսակատարութեան նախաձեռնութիւնը իր վրայ է վերցրել հայ մտաւորականների մի խումբ, որ ընտրել է այդ նպատակի համար առանձին յօբելենական յանձնաժողով՝ 15 հոգուց բաղկացած։

Յօբելեանական յանձնաժողովը, յանձն առնելով կատարել այդ հաճելի պարտականութիւնը և միանգամայն վստահ լինելով հայրենի գրականութեան ջատագովների համակրութեան վրայ, սրանով հրաւիրում է այն անձանց, որոնց համար թանգ է այս կուլտուրական տօնը, ինչպէս և Ձեզ, Մեծարգոյ Տէր, մասնակցել Ձեզ հաճելի եղանակով յառաջիկայ հանդիսին, որը կայանալու է 1913 թուի ապրիլի 27ին Բագուում։

Յանձնաժողովը խնդրում է հիմնարկութիւններից և մասնաւոր անձինքներից վաղօրօք յայտնել՝ յօբելենական հանդիսին մասնակցելու եղանակի մասին։ Բոլոր գրագրութիւնները, ինչպէս և ուղերձները, շնորհաւորումները և նվէրները պէտք է ուղղել յանձնաժողովի նախագահի անունով։

Բագու։ Մարտի 6ին 1913 թ. Յանձնաժողովի նախագահ՝

ՊՕՂՈՍ ԿԱՐԱ–ՄՈՒՐՋԱ

Փոխ–նախագահ՝ ԹԱԴԷՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ

Գանձապահ՝ ԳԵՂԱՄ ԿՈՍՏԱՆԵԱՆ

Քարտուղար՝ ԱՐ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Հասցէն՝
Mr. Paul Kara–Moursa
Milutinskaja 4
BACOU (Russie)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՋԱՇԵՐ ԵՒ ԽՆՃՈՅՔ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԳՐԵՑ

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

Էջ՝ 500 — Գինն է Ֆր. 3. —

Դիմել

Imprimerie Arménienne

St. Lazare *Venise*

digitised by A.R.A.R.@